



# Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

## «ԵՒ ՅԵՐԿԻՐԴԻՍԱԳՂՈՒԹԻՒՆ»

(«ET IN TERRA PAX»)

«ԵՒ ՅԵՐԿԻՐ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ»:

Քրիստոսավանդ խաղաղության այս պատգամի լույսի տակ, հունիսի 13—18-ին, Պրագայում գումարվեց Խաղաղության պաշտպանության համաֆրիստոնեական համաշխարհային կոնգրեսը, որին մասնակցում էին 54 երկրների ֆրիստոնեական տարբեր եկեղեցիների և դավանությունների ավելի քան 600 պատգամավորներ:

Հայ Եկեղեցու պատգամավորությանը բարեհաճել էր անձամբ գլխավորել Ազգիս Վեհափառ Հայրապետը, միջեկեղեցական այս մեծ կոնգրեսին բերելու Հայ Եկեղեցու «ԵՂՐԱՅՐԱԿԱՆ ՄԻՐՈՆ ՈՂՋՈՒՅՆ, ՋԵՐՄԱԳԻՆ ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԼԵՅՈՒՆ ՍՐՏՈՎ», — ինչպես նշել է Վեհափառ Հայրապետը կոնգրեսի բացման օրը, հունիսի 13-ի երեկոյան, Խոզույնի խոսքի մեջ. «ԼՆՆՈՒՆԵՆՍԻՍՄՈՎ ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՅՍ ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ, ՄԵՆՔ ՑԱՆԿԱՑԱՆՔ ԱՆՉԱՄԲ ԳԱՆ ԱՅՍՏԵՂ, ՄԵՐ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՆԿԱՄՆԵՐԻ ՀԵՏ ՄԻԱՏԵՂ, ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԽՈՍՔԸ»:

Օրերի հետ վերջերս անում, կազմակերպվում է աշխարհի բոլոր մասերում խաղաղության պաշտպանության համաժողովրդական շարժումը:

Խաղաղության պաշտպանության համաշխարհային շարժման գործուն և անմիջական մասնակցություն են բերում մի շարք ֆրիստոնեական եկեղեցիներ, այդ թվում նաև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին,

որպես խաղաղության վրա հաստատված աստվածահիմն հաստատություն:

Քրիստոնեությունը խաղաղության կրոն է, իսկ Քրիստոս, «որ վասն մեր մարմնացաւ», «Խաղաղութեան Իշխան»-ը, որը եկավ «ի լրումն ժամանակաց», խաղաղացնելու ինքնիր մեջ այնպիսի, բաժան և անհանգիստ աշխարհը, հաշտեցնելու Աստուծուց հեռացած, շարացած և դառնացած մարդկության՝ Արարչի հետ:

Քրիստոնեական կրոնը խաղաղությունը պաշտպանողներին, խաղաղության համար պայքարողներին համարում է Աստուծո որդիներ. «Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեցիւն»:

Ի՞նչ է Քրիստոնեական Եկեղեցու հիմնական, գործնական առաքելությունն այսօր աշխարհում: Խաղաղության պատգամ և աղօթք ու գործ՝ հանուն խաղաղության:

Պրագայի Խաղաղության պաշտպանության համաֆրիստոնեական համաշխարհային կոնգրեսում հավաքված բոլոր մարդկանց սրբազան խոհերն ու զգացմունքները նույնպես թևածում էին երկրի վրա կայուն խաղաղության և մարդկանց միջև համերաշխության վսեմ և աստվածահան զաղափարների շուրջ, որովհետև խաղաղությունը միայն կարող է բերել կյանք, լույս, պրոգրես և բյուր բարիքներ, մինչ պատերազմը մեծ աղետ է, շարիք ու մահ, թե՛ մեծ և թե՛ փոքր ժողովուրդների, կրոնների, եկեղեցիների, կրոնական և ֆաղափական տարբեր համոզմունքների տեր միլիոնավոր մարդկանց համար, բովանդակ աշխարհի համար:

«ԵԿԱՆՔ Ձեր Մեջ, Ձեր Կողմին,—  
ասում է վեհափառ հայրապետը Իր ող-  
ջույնի խոսքի մեջ.— ԱՄԵՆԱՅՆ ՈՒՐԱ-  
ԽՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԼԱՎԱՏՅՈՒԹՅԱՄԲ ՈՒ ԽՈՐ  
ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՄԲ, Թե ԳԱՆԻՍ ԵՆՔ ԱՍՏՎԱ-  
ԾԱՀԱՆՈՒ ՄԻ ՄԵՍ ԳՈՐԾԻ ՀԱՄԱՐ ԽԱՂԱ-  
ՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻ ՀԱՄԱՐ: ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԸ, ԱՄԵՆ ԲԱՆԻՑ ԱՌԱՋ ԵՎ ԲՈՂՈՐԻՆԸ  
ԼԻՆԵԼՈՒՑ ԱՌԱՋ ՄԵՐ ԳՈՐԾԸ Է. ՄԵՐ ԸՈ-  
ԿԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԿՈՐԾԸ, ՔՐԻՍՏՈՍԻ ԵԿԵ-  
ԼԵՑՈՒ ԿՈՐԾԸ:

Հեռու Մեջանից ԱՅՆ ՄՏԱՄՈՒՄԸ, Թե  
ՄԵՆՔ ՊԱՐԶԱՊԵՍ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԻ-  
ՋԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԱՐՈՂՆԵՐ ԵՆՔ, ԿԱՄ  
ԱՅԳ ՇԱՐԺՄԱՆ ՀԵՏԵՎՈՂՆԵՐ ՄԻԱՅԻ: ՄԵՐ  
ԿԱՐԾԻՔՈՎ ԱՅԳՔԱՆԸ ՔԻՉ ՊԵՏԻ ԼԻՆԵՐ  
ՄԵՉ՝ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՍ ԵՎ  
ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՍ ՀԱ-  
ՄԱՐ:

Ոչ մի ժամանակ աշխարհը չի տեսել  
այնքան արյուն ու արցունք, այնքան մահ ու  
ավերածություն, որքան առաջին և երկրորդ  
համաշխարհային պատերազմների տարիներ-  
ին:

Մարդկությունը երբեք չի ապրել այնքան  
տառապանք ու վիշտ, որքան մեր օրերի սե-  
րունդը ֆաներորդ դարի առաջին այս հիս-  
նամյակում:

Իսկ է՛լ ավելի ահավոր, կործանարար ու  
բնաշնչող կլինի, ատոմական այս դարում,  
երրորդ համաշխարհային պատերազմը, եթե  
հեռավոր շրիհի այն կասեցնել բարի կամ-  
ֆի առ միլիոնավոր մարդկանց վեհական,  
համարձակ և հետևողական պայքարով:

ՊԱՏԵՐԱԶՄԸ ՈՃԻՐ Է ԱՍՏՈՒԾՈՒ ԳԵՄ,  
ԵՐԿՆՔԻ ԳԵՄ, ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ՎԵՉ ՈՒ ԵՎԻ-  
ՐԱԿԱՆ ԻԳԵՆԱՆԵՐԻ ԳԵՄ, ՊՐՈԳՐԵՍԻ ԳԵՄ:

Պրագայում, Խաղաղության պաշտպանու-  
թյան համաֆրիստոնեական համաշխարհա-  
յին կոնգրեսում հավաքված պատգամավոր-  
ները անկեղծորեն միավորել էին իրենց  
աղոթքները, հույսերն ու ջանքերը հանուն  
խաղաղության համար մղվող ազնիվ պայ-  
քարի, անվրդով ու վառ հավատով, ան-  
կասում հույսով:

Մենք բոլորս ֆրիստոնյաներ ենք, սիրո,  
եղբայրության և խաղաղության ֆարգիչներ,  
ավետարանիչներ: Բայց ֆիչ է խաղաղու-  
թյան ֆարգի, խաղաղության համար աղո-  
թելը: Խաղաղությունը պետք է նվաճել միա-  
համուռ կամով, ֆրիստոնեական արիու-  
թյամբ, խաղաղ աշխատանքով: «Բռունք յա-  
փըշտակեցեմ զնա»:

«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԻԳԵՆԱԸ ՄԻ ԱՄՔՈՂՋ  
ԿԱՂԱՔԱՐԱՔԱՆՈՒԹՅՈՒՆ Է.— ասում է

վեհափառ Հայրապետը.— ՄԱՐԿԱՅԻՆ  
ԿՑԱՆՔԸ ԱՊՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԵԼՈՒ ՄԻ ԱՇ-  
ԽԱՐՀԱՅԱՅՔԻ ԷԱՊԵՍ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ:  
ԿԱՐԵԼԻ ՉԷ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԻԳԵՆԱԸ  
ԱՆՋԱՏՆԸ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԻՑ: ԵՎ Ա-  
ՌԱՆՑ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՃՇՄԱՐԻՑ ԽՈՍՔԻ ԵՎ  
ԿԵՆԴԱՆԻ ԳՈՐԾԻ, ԳՅՎԱՐ ԹԵ ԿԱՐԵՆԱՅԻՆՔ  
ՔՐԻՍՏՈՍԻ ՀԵՏԵՎՈՐԻՆԵՐ ԿՈՉՎԵԼ: ՔՐԻՍ-  
ՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՆՔԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԻ  
ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ Է ՄԱՐԿԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԻ  
ՄԵՉ: ԸՆԴԳԻՄԱՆԱԼ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԵՇԱՆԱ-  
ԿՈՒՄ Է ՀՊԱՏԱԿՎԵԼ ԱՍՏՈՒԾՈՒ ԿԱՄՔԻՆ»:

Ահա թե ինչո՞ւ այսօր, ավելի քան երբևէ,  
վեհական պետք է հեշի ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ  
ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՋԱՅՆԸ ՀԱՆՈՒՆ  
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ, ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԱՐԳԱ-  
ՐՈՒԹՅԱՆ, ՀԱՆՈՒՆ ԺՈՂՈՎԱՌԻԳՆԵՐԻ ԱՋ-  
ԳԱՅԻՆ, ԿՐՈՆԱԿԱՆ ՎԵՉԻՐԱՎՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԱՋԱՏՈՒԹՅԱՆ, ԸՆԴԳԵՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ:

«ԻՐԵՐԻ ԱՅՍ ԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԵՉ,— ասում  
է վեհափառ Հայրապետը հունիսի 14-ին  
կոնգրեսում խոսած «Խաղաղություն և  
ֆրիստոնեական արդարություն» թեմա-  
յի շուրջ Իր գեղեցիկ և բովանդակալից  
խոսում,— ՔՐԻՍՏՈՍԻ ԵԿԵՂԵՑԻՆ ԸՆ-  
ՇՈՒՇՏ ՈՐ ՊԵՏՔ Է ՈՒՆԵՆԱ ԻՐ ՀՍՏԱԿ ՈՒ  
ՎՃՈՒԿԱՆ ԿԵՑՎԱՄՔԸ, ՊԵՏՔ Է ՈՒՆԵՆԱ ԻՐ  
ԱՍԵԼՔԸ ԱՆՇՓՈՒՔ ԽՈՍՔԸ, ԵՎ ՀԱՆԳԵՍ ԳԱ  
ԻՐ ԳԱՂԱՔԱՐԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ ԲՈՎԱՆ-  
ԴԱԿ ՀՋՈՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԻՐ ԳՈՐԾԵԼՈՒ ԲՈ-  
ԼՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ, ՍՈՒՐՔ  
ՉԳԱՑՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԼՈՒՍԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ  
ԱՌԱՋՆՈՐԳԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԱՐԿԱՅԻՆ  
ԽՈՍՔԸ ԵՎ ՕԳԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲՈՂՈՐԻՆ, ԵՎ  
ՄԱՆԱՎԱՆԻՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՂԵԿՈՎԱՐՆԵՐԻՆ,  
Ի ԽԵՂԻՐ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՆՈՎՈՐՆԵՐ  
ԳՏԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՊԵՆԻՆՈՒ ՄԵՍ ԿՈՐԾԻ»:

Արդարև, պատմության մեջ ո՞չ մի ժո-  
ղովարդ, ո՞չ մի եկեղեցի շարունակաբար չի  
կրել այնքան դարավոր զրկանք, անիրա-  
վություն և անարդարություն, որքան հայ ժո-  
ղովարդը:

Պրագայում, խաղաղության մեծ կոն-  
գրեսի առաջ, հույսով և լավատեսությամբ  
հեշում էր վեհափառ Հայրապետի ձայնը,  
խաղաղության աստվածահան և մարդասի-  
րական գործին ի նպաստ. «ԻՐԵՎ ԵԿԵՂԵՑԻ  
ԵՎ ԻՐԵՎ ՄԻ ՓՈՔՐ ԺՈՂՈՎՈՐԻԳ, ՈՐ ԱՆՑ-  
ՅԱԼՈՒՄ ԱՀԱՎՈՐ ԿԵՐՊՈՎ ՏՈՒԺԵԼ ԵՆՔ  
ՄԵՍԵՐԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԸՆԹԱՅՔԻՆ, ԻՆՉ-  
ՊԵՍ ՕՐԻՆԱԿ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀՈՒՆ  
ՊԱՏԵՐԱԶՄԻՆ, ԵՐՔ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍ-  
ՏԱՆՈՒՄ ՆԱՀԱՍԿՎԵՑԻՆ ՄԵՐ ԵՐԿՈՒ ՄԻ-  
ԼՈՒՆ ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԸ ԻՐԵՆՑ ԻՍԿ  
ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀՈՂԻ ՎՐԱ, ԱՅՍՈՐ  
ՄԵՆՔ ՄԻ ՍՐՔԱԶԱՆ ԻՂՉ ՈՒՆԵՆՔ, ԱՅՆ Է՛  
ՏԵՍՆԵԼ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԽԱՂԱՂ ԳՈՅԱՎԻՃԱԿ,

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԲԱՐԻ ԿԱՄԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՇԻՆԱՐԱՐ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ»:

«ԵՂԻՑԻ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ» (Եսայի ԼԹ 8):

«ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ ԿԸԺ-ԲԱՆՏՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԲԵՐԵԼ ԹԵ՛ ԸԱՂՈՂՆԵՐԻՆ ԵՎ ԹԵ՛ ՊԱՐՏՎՈՂՆԵՐԻՆ,— առում է վեհափառ Հայրապետը իր ճառում:— ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՈԳԻՆ, ՌԱԶՄԱՄՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԲԵՔ ՉԵՆ ԿԱՐՈՂԱՑՆԻ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԵՐՄԱՆԵԼ ՈՒ ԸՍՍՏԱՏԵԼ: ՄԻԱՅՆ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԻՐՈ ՈԳԻՆ ԵՂԵԼ ԵՆ ՄԻՇՏ ՇԻՆԱՐԱՐ, ՍՏԵՂԾԱՐԱՐ ԵՎ ԱՂԲՅՈՒՐ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ»:

Պրագայի Խաղաղության պաշտպանության Համաֆրիստոնեական համաշխարհային այս կոնգրեսը իր որոշումներով, առաջարկներով և պատգամով մեծ ավանդ մուծեց Խաղաղության պաշտպանության հետ կապված մի շարք խնդիրների լուծման գործում: Պրագայում հավաքված ֆրիստոնեական տարբեր եկեղեցիների և դավանությունների ներկայացուցիչները, հանուն իրենց կրոնական և բարոյական սկզբունքների, դատապարտում էին պատերազմը և պատրաստ էին ընդմիջա փակել բոլոր այն ուղիները, որոնք կարող են տանել դեպի նոր պատերազմ:

Քրիստոնեական եկեղեցիների սրբազան կոչումն է անձնվիրաբար Խաղաղություն ֆարոզել և պաշտպանել Խաղաղության պատգամները ողջ աշխարհում:

Մենք այն հույսն ու հավատն ունենք, որ Խաղաղության պաշտպանության համաֆրիստոնեական համաշխարհային հաջորդ կոնգրեսներ կաշխատեն այդ ազնիվ ծրագրի իրականացմանը և իրենց կրոնաբարոյական մեծ հեղինակությունն ի գործ կդնեն այդ գանկալի, մարդասիրական և աստվածահանո նպատակին հասնելու համար:

Պրագայի Խաղաղության կոնգրեսի միահամուռ կոչերը, պատգամներն ու բանաձևերը կհանդիսանան բարոյական մի նոր խթան ժողովուրդների ազնիվ, նվիրական պայքարի հանապարհին՝ հանուն եղբայրության, սիրո և միջազգային Խաղաղության:

Հայ եկեղեցին, հավատարիմ իր կրոնաբարոյական իդեալներին և սկզբունքներին, կոչ է անում մի անգամ ևս բովանդակ աշխարհին Եսայի Մարգարեի բերեով, որ ՈԶ ՄԻ ԺՈՂՈՎՈՒՐԴ ՍՈՒՐ ԶԲԱՐՁՐԱՑՆԻ ԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻ ՎՐԱ ԵՎ ՄՈՌԱՆԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԵԼՈՒ ԱՐԸԵՍՏԸ, որովհետև, ինչպես մեր հավատի գանձարան Ս. Ավետարանն է սովորեցնում, ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ԱՍՏՎԱԾԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ, ՍԻՐՈ, ԵՂԲԱՅՐԸԹՅԱՆ ԱՍՏՎԱԾՆ Է:

Թո՛ղ ամենաբարի Աստուծո օրհնությունը լինի երկրագնդի Խաղաղասեր բոլոր ժողովուրդների վրա, և թո՛ղ Աստուծո բարիքներով հարուստ այս աշխարհում հաղթանակեն ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ, ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ, ԻՐԱՎՈՒՆՔԻ, ԱԶԳԵՐԻ ԱԶՍԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԸԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՉ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ:

